

յետեղ՝ իր արտասուակից աշուշներուն մէջ ուրախութեան արցունքներ պիտի հասնէ, ու ինքզինք ամենեւնի պիտի համարի, որ այնպիսի ժամանակի մէջ ապրած է, որուն մէջ ուրախութեամբ կը խոստովանի թէ Եղիսարեթուպոլսոյ ազգային հայ է:

Տուիք Եղիսարեթուպոլսոյ քաղաքը, Նոյեմբ. 27ին 1819.:

Բայց ափսոս, որ տեղեկութիւն չունինք թէ այս անձնաւորական գործքն ինչ գրամական արդիւնք ունեցած է:

Աւելի հաւանական կ'երեւայ, թէ ասանկ եռանդեան հետեւանքն ըլլայ, ան՝ երեք տարի ետքը, Յովհաննէս Գապտէպովեան աւագերիցոն ձեռնադրութեամբ սկսած գրածաժողովն, որուն քաջալերիչ եղած է, Պր. Աղէքս. Ռուսիայեան, երբ յորդորած է զազգայինները — չէ՛ թէ պարզապէս խօսքով, այլ արդեամբ — որ արթննան ու ետեւէն իշնան կարգաւորեալ դպրոց մը կանգնելու:

Աս ըսածներն, յաջորդ խօսքերով անմահացուցած կը գտնենք տարեգրոց մէջ: — Ահա անոր խօսքերը:

“Բազում՝ ժամանակք են՝ յորմէհետեւ արտասուածք աչք տեսնեալք զմոզեալ վեճակ քաղաքին մերոյ. որոյ կենաց մինչ չեւ. յանկ եկեալ հարկերամեայ ժամանակի, արդ մօտալուստ ի վերայ կայ ողբերգական ախտ մահաբուշակի: Անբարբառ հառաչանք օրտից մերոց աշօթս եւ պաղատանս առաքեալք ի վեր յերկինս իբրու զաստուածայինն կամեցեալ հարցանել զնախախնամութիւն, թէ ի՞նչ արդեօք կամք իցեն՝ զի այս փոքրիկ միաբնակութիւնս զինի սակաւատեւ կենաց իւրոց կասեցի ի գոլոյ. եւ ի քուն մահու ներհնէցէ: Այսպիսեօք շուրջ պատեալ էաք մատնութեամբք, յորում՝ ժամանակի ամենակալ ձեռնն աստուածային զարթոյց զայր ոմն ազգասէր առաքինի ի հշտակապ լոնտա քաղաքէ Մեծին Պրիտանիոյ. բորբոքելով զսիրտ նորա յայցելութիւն եւ ի բարեկամութիւն Հայոց Դրամսիլիանոյ. Պարոն Աղէքսանդր Ռաֆայէլ անուն աղուսազարմ Հառաիդ տանն Ղարամեան. զոր եւ արդեաւ իւր նորոգիչ ձանաչէ Եղիսարեթ քաղաքս այս Հայոց եւ երախտապարտ զանն նմա խոստովանի: Հասեալ սորա ի քաղաքս ի 25 Գեկտեմբերի յամի 1822, եւ ի ստեւա ժամանակի իմացեալ զվատթարեալ վեճակ քաղաքին՝ նա մանուսնդ զվերահաս կատարած նորա, զիւրոյ զառաքինի զազգասէր առաստաձեռնութիւնն կամեցաւ ցուս

ցանել սովին այսու: Քանզի գնացեալ սորա անգամ մի ի տուն Աւագերիցու եւ ժողովրդականի քաղաքիս Գերյարքելի 8էր Յովհաննիսի ի քապտէպովեան տանէ “Պատուական Հայր, ասէ, զվարդ է զի քանք ի վաղաշուտ կորուստ ձեր այդպէս զաշարու գտանիք առ ի չտեսնելոյ զայդ: Հիմն անկործան իւրաքանչիւր քաղաքաց պետութեանց եւ միաբնակութեանց՝ է զիւրն ապագայ բարգաւաճութիւն դնել ի յառաջադիմութեան մանկանց այնր ժամանակի, վասն որոյ զարմանամ մեծապէս տեսեալ զալքատութիւն զպրտաւորութիւն ոչ գիտեմ որպէս յանն իմ նշմարեմ զհետ երթալ բերման սրտիս, եւ ի քաղաքի աստ յայսմիկ լինել սկզբնաւորիչ նորոյ դպրաւանս. որպէս զի մանկունք քաղաքիս որք առ աղքատութեան չեն բաւական յօտարի քաղաքս ուսանել զուսումն, յայսմ քաղաքի զբարձրագոյն գիտութեանց եւ զվեճական մակացութեանց ձեռն պատրաստ գտցեն զհրահանգիչս. զի հայկազնեանս Հասարակութիւնն նորք նոր նորոգեալ հանապաղ մի պանակեսցի յազատաբարոյ եւ ի մեծիմաստ կառավարաց, որով փութիլ այն մարմին զիւրն անթերի լրութիւն միշտ ողջիկ պահեսցէ: Եւ արդարեւ յիշատակաց արժանի գործին իսկ եւ իսկ զգիտաբանին սրտի իւրոյ ի գործ եղեալ յայ 400 (Ֆիորին արեւմտի) որ ըստ այժմեան զորմոյ ասնէ (1000 Ֆիորին թղթեայ) ի ձեռն նախայիշեալ Աւագերիցուն ի հիմնարկութիւն եւ ի գործարկութիւն դպրատան: Իսկ Աւագերեցն անյապաղ զայս մեծանշանկան պարգեւ ի 15 Փետրվարի ի 1823 մատուց առաջի Ատենակալաց քաղաքին եւ Հասարակութեանն: Որք ինդամիտ եւ երախտագէտ սրտիւք ընդունելով զգիտաբանին եւ մեզ զգիտաբարձրանոյն գովութեանց Պարոնին հաստատեցին վրան այսր մասնաւոր առեան, որոյ գլխաւորք են ինքն: Վերոյիշեալ Աւագերեցն Գերյարքելի 8էր Յովհաննէս քապտէպովեան. Պ. Աղաւայ Վարդան Լէնկէրեան. Պ. Աղաւայ Անտոն Ֆոքքեան. ընդ որս եւ նոտար մի Ասպետ Սիմոն անուն Զաքարեան:

Սոքա սոյսմ ամի ի 21 Փետրվարի Ժողովեալ ի յուն Աւագերիցուն զվերոյ գրեալս զայստիկ իբրեւ համառօտ իմն պատմութիւն ի գիր արձանագցոյցին հարազատ գրեց իւրեանց նորարդողը դպրատան, կամեցեալ այնու յառաջիկայ յիշատակարանի բովանդակել ընդ մեծի անունս Պարոն Աղէքսանդրի Ռաֆայէլի եւ զանուանս ապագայիք բարերարաց հանդերձ

Համարը ձրիատուր արոց նոցա, Շնորհան Տէր
որ քան զոր յառաջագիմէ՛լ՝ զոր ետուրն մեզ
այժմ բարիք սկիզբն առնել։

Գրեցաւ յերկարեթ քաղաքի ի մշտն-
ջեան յանձն յիշատակ։ Թափ Տեառն 1823
եւ ի Փետրվարի 21.

Տէր Հովհ. Գաղաթիւսիւն. յ. յ.

Աւագերեց եւ Ժողովրդապետ։

Ս. արքան Լէնիւ. յ. յ.

Senator քաղաքին։

Միսն Գորգէան. յ. յ.

Interm. Exactor քաղաքին։

Սիմն Չափարիսիւն. յ. յ.

Նստարն։

Կը ներկայեմ առատաձեւն պարգեւ-
աւանդուան ցանկն, ինչպէս որ գտած եմ ար-
ձանագրութեան մէջ, — Սակայն որովհետեւ
շատ են տուողները՝ միայն մեծագոյն գումար-
ները կը քաղեմ լծաշեյ մեծ մասնինն մէջն։
— Արք.

“Նուն Բարերարաց Թափ Տեառն 1823.

Աւագ Գորգէ

Պարոն Աղեքսանդր Ռափայէլ Ղարա- մեան, ըստ վերագրելոյն առաջին բա- րեբոր՝ շնորհաց	400.—
Վարդան Բաղդուկանեան	20.—
Օվակիմի վորթի պետաւ թուրքայեան	20.—
Գրիգոր Ֆոթերեան	4.—
Աղեքսանդր Ռափայէլ Ղարամ, 15. օգոստ. 1823	200.—
Գրիգոր Վարդանի Բորբ	4. "
ս. Հ. Դեղան Անիմաին Օղեղիջեանմէ կտակով թողած գարաղուէննէն եկաւ	16.40
Օհաննէս Սերբիսեան Մայիսին 8. 1824	24.—
Աղեքսանդր Ռափայէլ Ղարամեան 15. օգոստ. 1824	200.—
Սիմն Մարգովիչեան՝	9.12
Martinus S. Patruban	20.—
Փրանկիսկոս Անեղովիչեան	10.—
Սիմն Մարգովիչեան Ժողովածոյքը	54.24
Maria Dallmayer	20.20
Գրիգոր Բեդրաշչոյ, Սիմն Մարգովիչե անգ	40. —
Congregatio S. Joanni Nepomuc	240.20
Մարտինոս Ֆորբեան	3.—
Եղիշաննէս Ֆորբեան	2.—
Զաքարիա Մարգանթիեան	5.—
D. Simon Markovits	23.—

1 Եւ եւ ասոր յարգած հոյերէն անունները, հոգն-
գարեբոր թարգմանութիւններն են։ — Ղառնիւրէններն
այսպէս թողաւ եմք.

Աւագ Գորգէ

Ղառնա Պառնապեան	5.—
Nobilis Martinus sen., Patrubany	50.—
Nobilis Martinus jun., Patrubany	50.—
D. Franciscus Szenkovits	25.—
Surata Localis Communitas	136.—
Petrus Thuraian armenus Constan- tinopl.	50.—
Գրիգոր Ֆորբեան	10.—
D. Simon Markovits	4.30
Գրիգոր Բորեան	10.—
Սիմն Մարգովիչի ձեռք	12.30
Nobilis Antonius jun., Lengyel obtulit.	8.40
E pro legato Annae Otves obvenit.	41.40
Comica Maria Dallmayer obtulit	51.27
D. Gregorius Petrasko	100.—
Joannes Sarkis armenus Constantino- politianus	60.—
Բողալեա Չիգի, Գր. Զաքարիաշէն Բոր- բեանին	10.—
Զաքարիա Մարգանթիեան	12.20
Oblatum D. D. Magistratum	45.—
Armeni Zalattnenses obtulerunt Sep- tem aureos imperiales՝	81.40
Confraternitas S Joannis Nepomuceni P. Antonius Sofiali Mechitarista localis	21.07
E pretio dividendae domus Cerdona- riae obvenere՝	30.—
E proba diffigendi pretii carnis bu- bulae՝ pro mense Hartio a. e. 39 fl. 44 kr. m. currenti 38 fl. 19 kr. in summa igitur	78.03
Congreg. S. Joannis Nepomuceni	42.—
E pretio dividendarum domorum Zin- garicarum a. D. Petro Masvitagi՝	200.—
Confr. S. Joannis Nepomuceni	35.08
D. Elias Medjesi	10.—
Confr. S. Joann. Nepomuceni	50.—
Joannes Szamosian armenus Con- stantinopolitanus obtulit 5 aureos Imperiales	60.—
Emanuel Antalfi 1829: Թուումար 19	50.—
Emanuel Szenkovits 1929: Թուումար 21	50.—

Դրամաժողովն՝ ինչպէս կը տեսնենք 1823
Փետր. 21ին սկսաւ, ու փակուեցաւ 1829 յու-
նիս 30ին։ — Ժողոված ամբողջ գումարն եղաւ
3240 ֆլորին եւ 1 քառանդան։

Չեռուրին գանուած արձանագրութիւն-
ներէն աւելի բաւ չի տեսնուիր ժողովածոյին
արդիւններն վրայ. — բայց, յայտնի է թէ ծրա-
գրի մէջ առնուած վարժարանի կանգնումը շատ

1 Զաքարիայի աղգայինները բերին եօթը կոյսերա-
կան սովի։

2 Խաղաղորդաց ծախան անին եկամտն.

3 եղան միայն ծախելու. զենն, մարտ ամսոյն մէջ. . .

ընդ ամենը։

4 Գնեղանիւրն ծախան աններէն եկաւ. Պետր. Ան-
անիի ձեռք։

աւելի ստակ կը պահանջէր ժողոված գումարէն: Ուստի գեղեցիկ ծրագիրն այն միջոցին պէտք եղաւ ի կախ պահել: — Ի վերայ այսր ամենայնի, զանկող գլուխ հանելը վերջականապէս չմոռուեցաւ: Խնդիրը դեռ քանի մը տարի երկնցեցաւ, մինչեւ որ, — ինչպէս ի՞նչ մը ետքը պիտի տեսնենք — Եղիսաբէթուպոլսոյ ազգայնոց հին փափաքը կատարուեցաւ:

Վերջգրեալ դրամաժողովն ու տուչութիւններն, ըստ մասին ըլլալի վարժոցին, ըստ մասին մանչ տղոց տարրական դպրոցին ու ըստ մասին աղջիկ տղոց դպրատան համար ժողովուած էին:

Կարեւոր կը համարիմ աս դպրոցներուն մէջ եղած քանի մը ներքին կարգադրութիւններն ընկերացողաց առջեւը գնելու, որովհետեւ ասոնց մէջ կը գտնենք շատ հետաքրքրական ու կարեւոր սկզբունքներ:

“Դպրատան կանոնադրութիւններ, Եղիսաբէթուպոլսոյ ազատ Թագաւորական քաղքին հասարակաց դպրոցացը համար, որոնք դպրոցական վարչութեանց կողմման, տեղւոյս եկեղեցական ժողովքէն — 1809 ապրիլ 10ին — ընդունուածներուն համեմատ նորէն յօրինուեցան ու նորոգուեցան, վերին գաւառական վաւերացմամբ եւ գրուեցան ու հրատարակուեցան խափապահպանուելու համար 1835ին”:

Կանոնադրութիւնը գեղեցիկ խօսքերով ուսման հարկաւորութեանը վրայ յիշատակութիւն ընելէն ետեւ, կ’ըսէ “Հասարակաց երջանկութեան հիմնաքարը” լաւ կրթուած պատանեկութիւնն է. իսկ լաւ կրթութեան շէնքին հաստատութեան քարը, նոյն իսկ կրթիչն եւ ուսուցիչն է: Ուստի թէ՛ ուսանողներուն — զիւրեք կարգի բերելու համար — ու թէ՛ ուսուցիչներուն — իրենք զիրենք՝ ճշգիւ անոնց յարմարեցնելու համար — յարօրդ դպրոցական կանոնները կը գրուին”:

Դպրոցական տարին կը սկսի նոյեմբ. 1ին եւ կը լրննայ յուլիսի վերջին օրը: — Ինչպէս ամէն տեղ, անանկ ալ Եղիսաբէթուպոլսոյ դպրոցին մէջ՝ հաստեքէն կը սկսի կրթութիւնը: Ուսանողք, չէ՛ թէ միայն կիրակի ու ասնի օրերը հապա անաւ շատ օրերն ալ, պատահաբ. տեսնելու պարտական են: Աս պատարագին առեն, փոխի ի փոխ հունգարերէն ու լատիներէն երգեր կ’երգեցուն: Մասնաւորապէս յիշուելու արժանի է, որ ուսանողք կէս օրէն ետեւ եղած երկնոցեան աստուածային պաշտաման ալ (litania) ներկայ պէտք են քսմուիլ, եւ մինչեւ վերջը հոն

մնալ ընդ պատժով: Աւանանքն կերպով հակելու է առաջին դասուն ուսուցիչն, որ տղաք դուրս չելլեն եկեղեցիէն, մինչեւ որ բարձր ձայնիւ երեք Ողջուն քեզ Մարիամ չըսեն: — Երկու բարձրագոյն դասի աշակերտները՝ ջատկին, Անարատ յղութեան, ճեռունգառաշինին ու Աւստման տներուն օրերը պէտք են խոստովանիլ ու հարգորդիլ: “Աս օրերուն մէջ՝ դպրոցէն, կարգաւ, Ողջուն քեզ ասող ծովային, երգելով եւ պատուելի եկեղեցականներէն ուղղեցնելով՝ մայր եկեղեցին կ’երթան եւ մինչեւ երգը երգելով՝ դպրոց կը դառնան”:

Կանոնադրութիւնը՝ կարգադրութիւն կ’ընէ անոր նկատմամբ, որ դպրոցին մէջ դասատուութեան ժամերը խափա պահուին: — Առաջին անգամ զանգակը հնչեցնելը պիտի ըլլայ առ. տու 7 1/2ին. որպէս զի մինչեւ ուժը՝ սորվելը լրնցնելով, ժամը 8ին ուսանողաց անունները կարենան կարգացուիլ: Ուսուցիչք ներս կը մտնեն եւ մինչեւ 10 շարունակ տղոց հետ կը զբաղին: — Աւտօրէն ետեւ սորվեցնելը՝ կը տեսէ, երկուքէն մինչեւ չորս: Երեքշաբթի կէսօրէն ետեւ, եւ հինգշաբթի՝ բոլոր օրը հանգիստ է: — Ոչ հայկական եւ ժշ տրիվիտական դպրոցներուն մէջ հինգ տարիէն նուազ հասակ ունեցող տղաք ներս ընդունելու հրաման կայ: Ասանկները՝ Ուսուցիչէան ստորնագոյն դպրոցին մէջ կ’աւանդին: — Թեպէտ եւ աս վերջին դպրոցին վրայօք տեղեկութիւն չունինք, բայց եւ այնպէս, ինչպէս կ’երեւայ այսօրուան ծագկադպրոցաց հիմնարկութեանը նման բան մ’եղած պիտ’որ ըլլայ: — Հարկ է հայերէն լեզուէն գիտնալ, որպէս զի մէկը հունգարական դպրոցն անունիս, Հոս հասկընալու չենք օտարազգիները:

Դպրոցական տղոց մարմնւոյ առողջութեանն ու մաքրութեանը շատ հոգ կը տարուի “որպէս զի առանց լուացուելու եւ մեծ ըրուպներով դպրոց չգան, ... Բորտներն ու հարցորող հիւանդութիւն ունեցողներն, առանց բացառութեան դպրոցէն կը մերժուին”:

Ձուրքը պատժելը՝ վարժապետաց ազատ կամացը թող տուած չէ: Մասնաւոր մեծագոյն պատիժներն սահմանելը՝ դպրոցական տեսչութիւնն իրեն կը վերապահէ: — Հատ առաքրքրական է ասոր նկատմամբ՝ դպրոցի վերատեսչութեան 1835 Մայիս 16ին բերած մէկ որոշումը: Հայր մը ամբաստանութիւն կ’ընէ, որ ուսուցիչն իր տղան ապտակ մը զարնել տուած է, ուրիշ ասանող տղի մը ձեռքը: Վերասես-

Քիչ մը ետքը կը գտնենք, թէ գարոցական մեր վերին տեսութիւնը՝ Թագաւորական գլխաւոր վարչութեան խորհրդին ազդեցութեանն ու իշխանութեան տակն է։ Ինչու որ վճարքը բարձրացընելն ու նուազցընելն՝ իրմէն կախում ունի։ — Ամենէն աղէկ կը վճարուէր գերմաներէն դասին վարպետին, որ ունէր 250 ֆիրդին իրական դրամ ու չորս ձողաչափ վառելու փայտ։

Ստոյգ է, ասոնք մեծ գումարներ չեն, բայց նկատելով այն ասեմի յարաբերութիւններն ու ամենութիւնը, ինչպէս նաեւ զոն, որ ուսուցչինքուն՝ որոնք ըստ մասին քահանաներէն էին, աղաքը վարժեցընելէ (corpetitio) եւ ուրիշ աղբիւրներէ ալ՝ երկրորդական եկամուտներն ունեցած պիտ'որ ըլլան։ — բաւական էր պատուիր կերպով մը ապրելու։

Աս տեսելով՝ սոուգիւ ճանաչողութեամբ պէտք ենք յիշել Եղիսաբեթուպոլսոյ ազգայիններն, որոնք արդէն նախորդ դարուն աւազին տասնեակին մէջ այսպիսի լաւ հասցի կու տային իրենց գարոցի վարժապետներուն։

(Էւրոպական)

ՅՈՂՃ. ԱՆՅՅԻ



ՄԱՅՆՆԱԽՈՍԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՎՎ. ԹԱԽՄԱՆԱՆԵՐ

Ստոյգ է որ բանաստեղծութիւնը յառաջ կը բերէ ժողովրդեան մէջ մտաւոր կամ հոգեկան յեղափոխութիւն մը, բայց այն ալ ստոյգ է, որ այս յեղափոխութիւնը միայն «բանաստեղծ» անուան արժանի անձանց ձեռքով կրնայ յառաջ գալ, եւ ոչ թէ այնպիսեաց՝ որ առանց այս կոչման՝ բանաստեղծելու ունայնամիտ տկարութիւնն ու անմիտ յաւակնութիւնը կ'ունենան։ Այս տկարութեան ախտէն վարակուողներն գոժախտաբար մեր մէջը բազմաթիւ են։ Թողունք ասոնց վրայ խափը՝ որ մինչ բանաստեղծական աւելն զգալին ինքնին իսկ ոտանաւորին մէջ կը յայտնեն, անդին իրենց վերնագիրը գրած նիւթն այն աստիճանի անպաշտօն կը նկարագրեն, որ կարծես անալ վերնագիր ընտրած են։

Սկսիմք մեր մասնախօսութիւնը։

Աւաղկապ գրքին Հեղինակը Բովհ. Թուանեան արդէն ուրիշ նման գրքերով ծանօթ անձնաւորութիւն մ'է։ Մատենախօսութեանն

նիւթ կազմող գործքը 300 երես ընդարձակութիւն ունի եւ նոր ծաշակով ապուած է. գրքին սկիզբը Հեղինակին պատկերը զետեղուած է։ Բովհակալ մատենան չորս մասի բաժնուած է։ 1. Երկեր (այսինքն քնարերգական բանաստեղծութիւններ)։ 2. Լիբնէլներ (առասպելներ) 3. Պոեմներ, (այս ընդհանուր անուամբ իմանալու է վիպասանական բանաստեղծութիւններ) եւ 4. Թարգմանութիւններ։

Թուանեանին ոճն ընդհանրապէս պարզ է. բարձր փիլիսոփայութեամբ կամ գաղափարական նկարագրութեամբ գրել չի սիրեր, որով թողլէրգալս թուաստելն անուան լիովին արժանի է։ Քնարերգական բանաստեղծութիւնները լի են վեհ զգաստեմներով, բարձր գաղափարներով եւ հոգեկան ազգու շնչետրով։ Չունի անհամ գիտնականութեամբ բռնաւարտալ լեզու (ինչպէս Պոլսեցիք) կամ տեսակ մը պերճաբանութիւն կոչուած անհամութիւնը, աղակալից բառերու խճողումներ (ինչպէս Անթիմոնեան եւ Հեանտըլը), որոնցմէ երբեմն իմաստ հանելն անհնարին կ'ըլլայ։ Յիշենք գեղեցիկ ստանաւորներէն Հին Երկնային, որ բանաստեղծը հայ թռուներն այս խօսքերով օրհնել կու տայ պապերէն

“Աղբէ՛ր երեմի՛,

Բայց միշտ դէմ Լաղբէ՛ր... ,

Այսպէսով տկարին առջեւ ոտանաւորին մէջ նշոյն հանձնարը իբր Ստեղծող կը ներկայացընէ, որուն մէջ “կանգնեցէք, գոչելով մուծ յալիները կուտի վրայ կը կանգնին։ Բանաստեղծութեան զարդեր են նաեւ թղթաւ ուղիք եւ Պաշտօնի Եւ Իշխանի ոտանաւորները։ Առաջնոյն մէջ այսպէս կ'երգէ Բանաստեղծը.

“Դու մի հաւատաւ ժըպտուն աչքերին
Հատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ,
Բուսած կորստան անգուշիկ ծայրին
Միամիտ մարդկանց քարջելու համար... ,

Դու շատ մի խաբուիր ժըպտուն աչքերից.
Հատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ,
Ծըլուծ են սրտի աւերակներից
Տըխուր յատակը ծածկելու համար... ,

Աւաղկեան կամ լաւ եւս առասպելներուն նկարագիրը վարդապետական չէ, հապա վիպական։ Առաջին առասպելին մէջ շատ եւ կատուին թշնամութեան պատճառը կը պատմուի, երկրորդին մէջ Աղթամար կղզւոյն այսպէս կուչուելուն պատճառը կը յայտնէ, որ ճարտար